



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք, Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

22 օգոստոսի 2013 թվականի N36-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ / ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունն, ավագանին որոշում է.

1. Հաստատել «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2004 թվականի օգոստոսի 30-ի N07 նիստի N1 որոշումը և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղապետարանի 2006 թվականի մարտի 17-ի N10 նիստի N3 որոշումը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավար Լ. Գրիգորյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (9)

դեմ (0)

ծեռնպահ (0)

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

Գամբ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՅՔԱՐ

Գ. ԴՎ.

ԵՍԱՅԱՆ ԱՐՏԱԿ

Վ. Նույն

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Արթուր

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՄՈՒՇԵՂ

Մուշեղ

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

Կարեն

ՇԱՄԲԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Շամբար

ԶՈՒՄՇՈՒԴՅԱՆ ՀՐԱԶԻԿ

Հրազիկ

ՏՈՆՈՅԱՆ ԱՎԵՏԻԲ

Ավետիբ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

[Handwritten signature]

ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ